



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԱԲ
ԵՐԵՎԱՆ-ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ
ՀՈՉԱԿՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Հայաստան-Միացեալ Նահանգներ գործակցութեան, ու յատկապէս մայրաքաղաք Երեւանի ու Լոս Անճելըսի միջեւ յարաբերութեանց զարգացման իմաստով պատմական քայլ մը արձանագրուեցաւ Ուրբաթ, 23 Փետրուարի առաւօտուն, «Երեւան-Լոս Անճելըս Քոյր Քաղաքներ» համաձայնութեան ստորագրումով ու հռչակումով:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ պաշտօնական արարողութեան ու անոր հետեւած հանդիսութեան, որոնք տեղի ունեցան Լոս Անճելըսի քաղաքապետարանի յարկին տակ, առաւօտեան ժամը 10ԷՆ սկսեալ: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Կրօնական Ժողովի Ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան եւ Թեմիս ժողովականութեան անդամներ: Ներկայ էին Լոս Անճելըսի ու Երեւանի քաղաքապետները՝ Անթոնիօ Վիերակոսա եւ Երուանդ Չախարեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի եւ խորհրդովի անդամներ, Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներու հոգեւոր առաջնորդներ եւ ներկայացուցիչներ, հայկական քաղաքական կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներ եւ այլ հրաւիրեալներ:

Համաձայնագիրին ստորագրումի արարողութիւնը տեղի ունեցաւ քաղաքապետութեան ժողովասրահին մէջ: Հռչակագիրի ստորագրումէն առաջ, խօսք առին երկու քաղաքապետները եւ Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամները, որոնք անդրադարձան այս իրագործումին ու գործակցութեան տարածուող դաշտերուն:

Պաշտօնական արարողութենէն ետք, ներկաները համախմբուեցան քաղաքապետութեան »Ռոթօնտա« հանդիսավայրին մէջ, ուր Երեւան-Լոս Անճելըս Քոյր Քաղաքներու Շնկերակցութիւնը կազմակերպած էր յատուկ ընդունելութիւն-յայտագիր մը: Հանդիսավարն էր դատաւոր Կրէկ Զեօսեան: Խօսք առին Առաջնորդ Սրբազանը, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահը, Երեւանի քաղաքապետը եւ Հայաստանի գլխաւոր հիւպատոսը:

Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը գոհունակութիւն արտայայտեց այս հռչակումին համար, բարձր գնահատեց այս նպատակով գործողներուն աշխատանքները, շնորհաւորեց իրագործումը եւ մաղթեց, որ այս քայլը նոր հորիզոններ բանայ Երեւանի ու Լոս Անճելըսի միջեւ սերտակցութեան դիմաց:

PRELATE PARTICIPATES IN THE INAUGURATION OF THE LOS ANGELES-YEREVAN SISTER CITY ASSOCIATION

On the morning of Friday, February 23rd, the Los Angeles-Yerevan Sister City association was inaugurated at L.A. City Hall by Los Angeles Mayor Antonio Villaraigosa and Yerevan Mayor Yervant Zakharian. The ceremony began at 10:00 a.m. and was presided over by City Council President Eric Garcetti, with the two mayors and Consul General Armen Liloyan as honored guests. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the official ceremony as well as the reception. Accompanying the Prelate was Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Prelacy delegates. Also in attendance were representatives of various Armenian organizations and guests.

The official ceremony took place inside the City Hall chambers, during which both mayors congratulated each other and conveyed their best wishes. After the inauguration, a reception took place at the City Hall Rotunda, organized by the Los Angeles-Yerevan Sister City Association, during which remarks were made by the Prelate, Council President Eric Garcetti, Mayor Zakharian, and the Consul General Liloyan. The Master of Ceremonies was Judge Greg Keosian.

In his remarks, the Prelate expressed gratitude for this declaration, commended all the efforts made for this purpose, and conveyed his blessings and encouragement, expressing hope that this step would result in stronger ties between the two cities.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.

If you wish to be removed from [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) mailing list, please send email to: info@westernprelacy.org and asked to be removed.